Հարցաթերթ

Աշխարհագրություն առարկայի օլիմպիադայի մարզային (քաղաքային) փուլի – 2016 թ.

/տևողությունը՝ 150 րոպե/

10-րդ դասարան

1. **Տրված պետությունները դասավորել բնակչության թվաքանակի աճման կարգով**……...1 միավոր
   1) Նիգերիա 3) ԱՄՆ
   2) Մեքսիկա 4) Թուրքիա

2. **Տրված հարթավայրերն ըստ բարձրության դասավորել նվազման կարգով**……1 միավոր
   1) Միջագետքի 3) Մերձկասպյան
   2) Բրազիլական 4) Միջինռուսական

3. **Աշխարհագրական հետազոտության մեթոդների վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ**……1,5 միավոր
   1) Աշխարհագրական տեսական մեթոդներից լայն տարածում ունի դաշտային (արշավախմբային) մեթոդը:
   2) Համագիտական մեթոդները կիրառվում են միայն գիտության որոշակի ճյուղերում:
   3) Նկարագրական մեթոդը գիտական ճանաչողության հնագույն մեթոդներից է:
   4) Աշխարհագրական հետազոտության մեթոդները լինում են մասնավոր աշխարհագրական և համաաշխարհագրական:
   5) Համեմատական աշխարհագրական մեթոդի էությունն այն է, որ համեմատելով աշխարհագրական տարբեր օբյեկտներ փորձում են բացահայտել դրանց զարգացման ընդհանուր օրինաչափությունները և տարբերությունները:
   6) Կոնկրետ գիտական մեթոդները կիրառելի են գիտության բոլոր ճյուղերում:

4. **Աշխարհի քաղաքական քարտեզի վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ**……1,5 միավոր
   1) Աշխարհի քաղաքական քարտեզի ձևավորման նորագույն ժամանակաշրջանի առաջին փուլի կարևորագույն իրադարձություններից է Օսմանյան և Ռուսական կայսրությունների փլուզումը:
   2) Տարածքի մեծությունը քաղաքաաշխարհագրական գործոն է:
   3) Աշխարհի քաղաքական քարտեզի ձևավորման նորագույն ժամանակաշրջանի կարևոր իրադարձություն չէ գաղութային համակարգի փլուզումը:
   4) Աշխարհի քաղաքական քարտեզի ձևավորման նորագույն ժամանակաշրջանն ընդգրկում է 16-19-րդ դարերը:
   5) Գաղութային անցյալն ազդել է Աֆրիկայի երկրների սահմանների գծագրության ձևավորման վրա:
   6) Աշխարհի քաղաքական քարտեզի ձևավորման միջնադարյան փուլը կապված է կապիտալիստական դարաշրջանի հետ:

5. **Ի՞նչ է գյուղատնտեսության զարգացման էքստենսիվ եղանակը**……...3 միավոր
   ա) տալ հասկացության սահմանումը
   բ) ո՞ր տիպի երկրներին է բնորոշ
   գ) բերել 5 օրինակ (երկրներ):

6. **Անապատների առաջացման, կլիմայական և աշխարհագրական տարածման առանձնահատկությունները**……...3 միավոր
   ա) որո՞նք են անապատների առաջացման հիմնական պատճառները,
   բ) կլիմայական պայմանները (ջերմություն և խոնավության միջին ցուցանիշները),
   գ) կլիմայական ո՞ր գոտիներում են տարածվում անապատները և յուրաքանչյուր գոտուց բերել անապատների 2-ական օրինակ:

7. **Թվարկել 2 պետություն հետևյալ հատկանիշներով**……1 միավոր
   ա) Պետության տարածքի հիմնական մասը զբաղեցնում են սառցադաշտերը,
   բ) պետություն, որը գտնվում է 4 կիսագնդերում:

8. **Դուրս գրել Հայկական լեռնաշխարհի հրաբխային գագաթների համարները**……...1 միավոր

1) Քաջքար (Կաչկար)	5) Աչքասար
2) Սուկավետ	6) Թեժլեռ
3) Սիփան	7) Մեծ Եղնախաղ
4) Ծղուկ	8) Գոմշասար

9. **Դուրս գրել Գերմանիային սահմանակից երկրների համարները**……..1 միավոր

1) Իտալիա	5) Հունգարիա
2) Շվեյցարիա	6) Նիդերլանդներ
3) Դանիա	7) Լիտվա
4) Սլովակիա	8) Լյուքսեմբուրգ

10. **Լեռան ստորոտին օդի ջերմաստիճանը 18° է, իսկ գագաթին՝ 12°: Ստորոտը գտնվում է ծովի մակարդակից 2400 մ բարձրության վրա (հաշվարկը կատարել 6°).**
   1) Որոշել լեռան հարաբերական բարձրությունը……1 միավոր
   2) Որոշել լեռան բացարձակ բարձրությունը……1 միավոր

11. **Երկրի բնակչության թիվը 20 մլն է, գյուղական բնակչության թիվը՝ 4 մլն: Մեկ տարվա ընթացքում ծնվածների թիվը 300.000 է:**
   1) Որոշել ուրբանիզացման մակարդակը……1 միավոր
   2) Որոշել ծնելիության գործակիցը (‰)……1 միավոր

12. **Գտնել համապատասխանությունը սյունակների միջև**……2 միավոր

Թերակղզի	Ո՞ր պետության կազմում է
1. Մալակկա	ա) Դանիա
2. Վալդես	բ) Չինաստան
3. Ղրիմ	գ) Ադրբեջան
4. Յուտլանդիա	դ) Արգենտինա
5. Լեառդունյան	ե) Ֆրանսիա
6. Ապշերոնյան	զ) Մալայզիա
7. Բրետան	է) Մեքսիկա
8. Յուկատան	ը) Ռուսաստան